ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

11-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ միջնադարի համար այս ժամանակաշրջանը դարձավ ամենանշանակալիցը, ստեղծագործական երկունքի առումով՝ ամենաբերքառատը: Սկսվեց աննախադեպ մշակութային վերելք՝ իր բազմակողմանի և գունեղ դրսևորումներով, իմաստասիրական մտքի պայծառ փայլատակումներով[1]: Ասպարեզ եկած հանճարեղ Գր.Նարեկացին, ստեղծագործել սկսելով տասներորդ դարում, իր գլուխգործոցը երկնեց տասնմեկի սկզբին /1003թ./: Նրան շարունակեցին Գր. Մագիստրոսը, Հովհ. Իմաստասերը և ուրիշներ՝ ապահովելով մեր գրականության շարունակական ընթացքը[2]:

Երկնառաք Մատյանում Գր. Նարեկացին դիմեց Աստծուն.

Տե՜ր պարգևատու, ինքնաբուն բարի,
Ամենքին իշխող հավասարապես,
Միակ արարիչ ամեն գոյության՝ անգոյությունից,
Ո՞վ փառավորյալ, անքնին, ահեղ....
Անսկիզբ-անվերջ ու անժամանակ,
Գիտություն անմեզ, տեսություն անգայթ,
Էականություն անկասկածելի /Գ.Ա/:

Մատյանի մուտքը բանաստեղծը սկզբնավորում է ավանդական զոհաբերության ծեսով: Երկի կառույցը նմանեցվում է շինության, որի ամրությունն ու հարակայությունն ապահովելու համար նրա հիմքում անմեղ զոհ է դրվում: Այստեղ այդ զոհը քնարական հերոսն է: Ըստ արվեստաբան Ժ.Խաչատրյանի՝ աղոթք-դյութանքի շնորհիվ ապահովվում է կառույցի՝ չար ուժերի կողմից

[1] Տե՛ս Մ.Աբեղյան, Երկեր, հ.Դ, 1970, էջ 17-32: Э. Межелайтис, Армянский феномен, Е., 1982, с.62-66.

[2] Տե՛ս Ս.Մխիթարյան, Գր.Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը,Ե., 2001,էջ 26-31: Հայկական Վերածնության մերժումը գեղագիտական և տեսական շատ խնդիրներ զրկում է լուծման բնականոն հնարավորությունից, իսկ նրանց զարգացման օրինաչափությունները դարձնում անհասկանալի: Հայկական Վերածնությունը նման չէ և չպետք է քննվի եվրոպական Վերածնության շրջանակներում, քանզի նա հենց Եվրոպայի տարբեր երկրներում իր ամենատարբեր դրսևորումներն ունեցավ, ու մի երկրի յուրահատկությունները չկրկնվեցին մյուսներում: Տե՛ս А. Ф. Лосев, Эстетика Возрождения, М., 1978, с. 20-23.

չավերվելը[3] ժողովրդական գիտակցության մեջ: Հրաժարվելով ժամանակի պատմական ըմբռնումից՝ բանաստեղծը թափանցում է ժամանակային նոր տիրույթ: Դա շարունակական ներկան է արվեստի ստեղծագործության մեջ: Հակադրվելով պատմական ժամանակին, որի մեջ դեպքերը, ծնվելով ժամանակային տիրույթից, «գրավում» են տարածությունը, պոեզիայում իրողություններն են «ծնում» ժամանակը.

Սաստիկ ամոթից դեմքով գետնահակ ու կորագլուխ,
Անկարող շարժել լեզուս անվստահ ու անհամարձակ,
Դիմելով գրչին, որ միջնորդ է մի
Ամուր կողպեքով արժանապես փակ, պապանձ շուրթերիս,
Նոր հառաչաձայն պաղատանքների երգեր ոգելով՝
Հեծեծանքներով դառն ու աղեկեզ
Բարձունքներն ի վեր պիտի առաքեմ /ԺԲ.Բ/:

Թեև ամեն ինչ տարիների սահմանով է չափվում, բայց իր կյանքը տարրալուծվում է անսահմանի մեջ: Խուսափելով ժամանակի պատմական կոնկրետությունից՝ բանաստեղծը ձգտում է պատկերային կոնկրետության: Դրա համար էլ նա թափանցում է փիլիսոփայական տիրույթ, որտեղ կարևորվում է խոհը: Մատյանի կառուցվածքային տիրույթում.

ա/ մտավոր շարժումը հարակրկնությունների ձևով փոխարինում է սյուժեին.

բ/ կերտվում է մի այնպիսի հորինվածք, որի մուտքը ցանկացած կողմից հնարավոր է ու թույլատրելի[4]:

Երկի ամեն գլուխ օժտված է հարաբերական ինքնուրույնությամբ, ունի իր ստույգ խնդիրը / ձեռագրերում նույնիսկ դրանք վերնագրված են/[5]: Ավելի լայն առումով Գր. Նարեկացու քնարական հերոսն առաջադրում է մարդու մահվանից ազատվելու և հավերժականին հասնելու փրկագործության խնդիրը.

....Թող որ ամենքին կյանք կամեցողիդ
Ու պարգևողիդ գթությունը գա,
Լույսդ ճառագի, փրկությունդ փութա,
Օգնությունդ հասնի, այցդ ժամանի,
Ողորմությանդ ցողն շտապելով՝
Ոռոգի պապակ անդաստաններն այս
Թշվառությամբ խոր մահվան վիհն ընկած գոս ոսկորներիս,
Եվ կենարարիդ սրբազան արյան բաժակն երկնավոր,
Որ միշտ անսպառ պատարագվում է

---

[3] Տե՛ս Ժ.Խաչատրյան, Ծիսական պարը տիեզերաստեղծման արարողակարգում, Ծիսական պարը հայոց մեջ /գիտաժողովի նյութեր/, Ե., 2002, էջ 10:
[4] Տե՛ս Ս.Մխիթարյան, «Ես եմ համայնը, և ամենքինն է պարփակված իմ մեջ», Տնտեսագետ, /պաշտոնաթերթ/, թ.6, Ե.,2003, էջ 12:
[5] Մատեան, էջ 160:

Որպես հիշատակ ննջեցյալների
Հոգու փրկության ու կենդանության
Ծաղկեցնի ու պտղաբեր դարձնի դաշտն իմ մարմնեղեն /ՂԵ, Գ/:

Մատյանը հավերժի ու հավերժականի մասին գիրք է, որը մեր անցյալը և գալիքը շաղկապում է իրար: Քնարական հերոսը ձգտում է Աստվածային Շնորհի միջոցով հասնել անմահության: Նրա համար Աստված և տիեզերական անհունն իր տեսանելի և անտեսանելի ձևերով ներթափանցված են իրար մեջ ու նույնացած: Մարդը աստվածայինի կրողն է, որ մաքրագործվելով կրկին պետք է վերամիավորվի իր նախասկզբի հետ: Միստիկ Գր. Նարեկացին վերջնարդյունքում հանգում է հումանիզմի սկզբունքների պաշտպանությանը[6]: Նրա գերխնդիրը մարդուն բարոյական անկումից փրկելն է և հոգևոր արժեքների վերականգնումը: Իր տաղերում մեծ ճգնավորը դրսևորում է բնության պաշտամունք, ուր ամեն գոյի հետևում քնարական հերոսը տեսնում է Արարչին: Լայն առումով 11-րդ դարի արվեստի ակունքում մարդն է, և մշակույթը մարդակենտրոն ուղղվածություն ունի: Դա է պատճառը, որ մարդու մասին պատկերացումներում բանաստեղծական միտքը դիմում է համարձակ բացահայտումների: Գր. Նարեկացու ժամանակակից Վ.Արևելցին իր Նեբողում Եզեկիել մարգարեի նկարագրած չորս արարածներից /մարդ, առյուծ, եզ, արծիվ/ ամենամեծ փառքի արժանացնում է մարդուն[7]: Նա ոչ միայն Անհական արքաների կյանքն է պատկերում, այլ վերակերտում է ,,Աստվածաշնչի,, կերպարների հայկական արքետիպերը և մտածողության ազգային կաղապարները: Ընդ որում, երբեմն երկնային կառքին լծված խորհրդանշական կենդանիներն ինչ-ինչ կերպ կապվում են չորս տարրերի հետ: Ջենման արարողությունը հիշեցնում է այն նույն քանդակապատկերները /եզան գլուխ, ոտքեր և կաշի/ , որ դրոշմված են վիշապներ կոչված ջրի պաշտամունքի քարակոթողների վրա[8]/ Ք.ա. 5-րդ ազարամյակ/: Նույն զոհաբերության ծեսը, որ կա Մատյանում[9]:

Սակայն մարդու իրավունքն ավելի շատ պաշտպանվում է հենց այս դարաշրջանում, երբ առաջադրվում է հոգու փրկության հարցը սեփական մարմնի մեջ: Ներբողյանի 3-րդ մասը՝ ,,Ի Կերպ առիւծոյն ... ,, հարազատ է այն

---

[6] Տե՛ս Վ. Չալոյան. Հայոց փիլիսոփայության պատմություն, Ե., 1975, էջ 303-418: Զընդունելով հեղինակի որոշ տեսակետներ՝ համամիտ ենք նրա սկզբունքային բաժանումների հետ:

[7] Վ. Անցի, Անեցի Վարդան վարդապետի երգել ի կառս..., Բանբեր Մատենադարանի, թ. 10, Ե., 1971, էջ 278:

[8] Տե՛ս Մ.Աբեղյան, «Վիշապներ» կոչվող ..., Ե., 1941:

[9] Վերգիլիոսն օրինակ «Գեորգիկայում» փառաբանում է երկրագործությունը, այգեգործությունը, անասնաբուծությունը և մեղվաբուծությունը: Այդ ամենում նկատելի են պտղաբերության աստծո պաշտամունքի հետքերը:

բառապատկերային ընդհանրությանը, որ ունի սա Գր.Նարեկացու ,,Տաղ Վասն Վերացման Խաչին,, /Ես ձայն զառիւծուն ասեմ՝.../ տաղի հետ: Առյուծակերպ Քրիստոսը դժոխքի կործանիչն է և միաժամանակ Միհր-Միթրայի քրիստոնեական խորհրդանիշը[10]:

Կյանքը թևակոխում է աշխարհիկ փուլ՝ վերակրկնելով անտիկ մշակույթի կարևորագույն շատ հատկանիշներ[11]: 11-րդ դարի բյուզանդական պատմիչ Մ.Փսելլոսը քննադատում է կայսրուհի Զոյեի մի քանի ապօրինի ամուսնությունները և քրիստոնյա գիտնականների աստղագուշակություններով, մոգությամբ, դիվագիտությամբ զբաղ վելը[12]: 11-րդ դարի ճիշտ նմանատիպ երևույթների մասին է խոսում Գր. Մագիստրոսը թոնդրակյանների գաղափարական սկզբունքների քննադատության առիթով[13]: Դա հաստատում է, թե միջնադարի այս շրջանը որքան է աչքի ընկնում այլախոհությամբ, բայց Մագիստրոսին հաջողվում է գաղափարական լուրջ հակահարված տալ թոնդրակեցիների աղանդին[14]: Սակայն թոնդրակյաններն էլ հատկապես չէին զիջում՝ շատ խնդիրներում՝ արտահայտելով համարձակ, քրիստոնեական նախնական ժամանակներին բնորոշ հավասարարական գաղափարներ: Պահլավունյաց իշխանը ստիպված տեղահանում է նրանց, որ սրանք հետ կանգնեն իրենց մոլորություններից, անընդունելի բարքերից[15]:

Ուշագրավ են Մագիստրոսի հարաբերություններն իր ժամանակի օտարազգի գիտնականների հետ: Իր մի թղթում /Հ/ արաբ Իբրահիմ ամիրային նա գրում է, թե հաճելի է բարի մտքով խոսել իր նամակագրի առաջադրած հետաքրքիր աստվածաբանական խնդիրների շուրջ:[16] Առաջադրած բազմաթիվ հարցեր քննվում և ստանում են հիմնավոր պատասխաններ: Իրար հետ բանավիճում և աշխարհայացքային զանազան «անթույլատրելի» հարցեր են քննարկում դավանանքով և ազգությամբ ամենատարբեր մարդիկ: Այսպիսի հնարավորություն նրանց ընձեռում է ազատախոհության դարաշրջանը: Այստեղ է, որ Գր. Մագիստրոսը հանդես է գալիս իբրև արևելաքրիստոնեական աշխարհի նշանավոր դեմք, մեծ մտածող ու իմաստասեր: Կիրակոս հույն դպրին Պահլա-

---

[10] Տե՛ս Ս.Հարությունյան, Հին Հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքն ու դիցարանը, Ե., 2001, էջ 41:
[11] Տե՛ս М.Пселл, Хронография, М., 1978, с.58.
[12] Տե՛ս նույն տեղում, էջ 278 և ծանոթ. 23-ը:
[13] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 161: Այսուհետև՝ Թղթեր:
[14] Տե՛ս Ս.Մխիթարյան, Հիշյալ աշխ., էջ 39-40:
[15] Տե՛ս Պատմութիւն Անանուն Զրուցագրի՝ կարծեցեալ Շապուհ Բագրատունի, Ե., 1971, էջ 102-205: Այդ պատկերը տեսնում ենք իրական կյանքում:
[16] Տե՛ս Թղթեր, էջ 170-171:

վունյաց իշխանը քննադատում է, քանզի հասարակության առաջ ելույթ ունենալիս նա զարմացել է մարդու արյունատար համակարգով՝ առանց խորամուխ լինելու նրա զուգահեռ դրսևորումների մեջ[17]: Նկատված չէ օրինակ բնության և մարդու նմանությունը: Այդ առիթով ծերության օրերում հանձնարարում է նրան ուսումնասիրել Գաղիանոսի 4-րդ և Սիսալիոսի 1-ին մատյանները կամ Գր. Նյուսացու կազմախոսության և բնության մասին աշխատությունը: Սոկրատեսի, Պլատոնի իմաստուն մտքերը վկայակոչելով՝ հաստատում է, որ իր համար կարևորն ամեն ինչ աստվածաբանական մտքի առաջադիմությանը[18] ծառայեցնելն է, որի դեպքում բոլոր մյուս գիտությունները պիտի ստորադասվեն նրան:

1047թ. նա Անիի կտակի շուրջ բանակցությունների ժամանակ Կոստանդնուպոլսում հանդիպում է արաբ իմաստասեր Մանուչեին. «յոյժ հմուտ իսմայէլական դպրութեան և ամենայն իմաստասիրութեամբ պերճացեալ և վարժեալ ի տաղասացութիւնս և հռետորութիւնս»[19]: Նրանց զրույցն ավարտվում է բանավեճով, իսկ բանավեճը՝ գրազով: Գրիգոր մեծ իշխանը պնդում է, թե «Աստվածաշունչ»-ը Աստվածային շնորհով է գրվել, իսկ արաբը՝ թե իրենց Ղուրանը արվեստով նրանից բարձր է: Գրազ են գալիս, և Մուհամմեդի «40 տարվա կատարածը» Մագիստրոսը կատարում է 4 օրում՝ գրելով իր խոստացած պոեմը: Զարհուրած հագարացին դառնում է քրիստոնյա: «Հազարտողեան» պոեմի ծնունդը և ստեղծագործական պատմությունը շատ բան են ասում Գր. Մագիստրոսի՝ որպես ժամանակի հզոր անհատականության մասին: Այս չափածո «Աստվածաշունչ»-ը Ս.Գրքի գրական մշակման յուրատեսակ մի փորձ է, երբ հայ հեղինակն առաջին անգամ համաշխարհային բանաստեղծության մեջ չափածոյի է վերածում այն: Նա կանգ է առնում մարդկության համար կարևորագույն սկիզբների վրա. ա/ Արարչագործության ու դրախտից վտարվելու, բ/ Համաշխարհային ջրհեղեղի, գ/ Բաբելոնյան աշտարակաշինության:

Քրիստոնեությունը պոեմում գնահատվում է Աստվածաճանաչողության տեսակետից: Կարևորվում է կենդանի Աստծո հետ մարդու հաղորդակցությունը և Նոր Կտակարանի դերը, որով բանաստեղծը լուծում է փրկագործության կարևորագույն խնդիրներ: Հիսուսի մահվան և հարության մանրամասները գրված են ուժեղ շնչով: Նրան հուզում է ադամական մեղքի և դրանից սրբվելու կարևոր գաղափարը, ինչպես Գր.Նարեկացու դեպքում: Եվ ի վերջո, նա տալիս է

---

[17] Նույն տեղում, էջ 110:
[18] Նույն տեղում, էջ 114:
[19] Տաղասացությունք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ, Վենետիկ, 1868, էջ Ա:

Հայոց մեծ դարձի պատմագեղարվեստական արժեքը, ինչը համահունչ է իր թեմային: Նա նաև այն հայ բանաստեղծն է, ով առաջինը մեզանում գործածում է հանգը՝ որպես բանաստեղծական ձևամիջոց: Բերած բազմաթիվ նորությունների պատճառով Գր. Մագիստրոսը դառնում է 11-րդ դարի ամենանշանավոր դեմքերից մեկը: Նա մեծ ու լուսավոր գաղափարների կրող բազմակողմանի զարգացած անձնավորություն է, հանրագիտակ մտածող, ժամանակի պետական և մշակութային գործիչ:

Դարաշրջանը եզրափակում է Հովհ. Իմաստասերը՝ մեծ տոմարագետը, գիտնականը և արվեստագետը: Նրա «Բան իմաստության» պոեմը գեղագիտական բարդ հարցեր է բարձրացնում, անդրադառնում արվեստի նախաստեղծ ուժի և մարդու՝ դրանից հեռանալու պատճառով բնական վիճակից կտրվելու հիմնախնդրին[20]: Մեղադրանք հնչեցնելով մարդու հասցեին՝ Սարկավագը ցանկանում է նրան կատարյալ տեսնել: Մեծ մտածողին չի բավարարում նրա անկատարությունը: Նա առաջադրում է արվեստի նոր տեսությունը, որի մասին Մ.Աբեղյանը գրում է. «Եթե դա պատահմամբ փրկված չլիներ կորստից /պոեմը/, մեր նոր մտավոր հոսանքի զարգացման տեսությունը թերի կմնար»[21]: Թռչունն օժտված է բնատուր շնորհով, մինչդեռ մարդը զարգանալով՝ հեռացել է բնությունից, ընկել անբնական վիճակի մեջ: Այդ պատճառով էլ նրա արվեստը բնածին չէ, այլ ձեռքբերովի, ու թեև նա դարձյալ սովորում է բնությունից, բայց ցածր է մնում նրանից: Կյանքի ներդաշնակության, կեցության աստվածային-բանական օրենքներով առաջնորդվելու մեծ ձգտում կա նրա մոտ: Հեղինակը պահանջներ է դնում, որոնք արդիական են և միտված մարդուն և մարդկությանը վերահաս կործանումից փրկելուն: Այսպիսով.

1. Մարդու հիմնախնդիրը 10-11-րդ դարի հեղինակների ուշադրության առանցքն է:

2. Ցայտուն են ինչպես հոգևոր ոլորտի յուրացումները՝ աստվածաշնչյան կերպարների նորովի ընկալումներով, այնպես էլ կյանքի աշխարհիկացման ընթացքով:

3. Գեղարվեստական խոսքի առաջատար բնագավառը դառնում է պոեզիան՝ իր ժանրերի ընդգծված բազմազանությամբ:

---

[20] Յովհաննու Սարկաւագի Իմաստասիրի եւ Վարդապետի ասացեալ Բան Իմաստութեան...., Սարգարիտներ հայ քնարերգության, հ.1-ին, Ե., 1971, էջ 78:
[21] Մ.Աբեղյան, Երկեր, հ. Դ, էջ 72: